ԱՄՓՈՓԻՉ ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի հինգերորդ գումարման
աշխատանքների արդյունքների մասին
(2012-2017թթ.)

ՀՀ ԱԺ-ի հինգերորդ գումարման ընթացքում Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովը քննարկել և վավերացրել է 189 միջազգային պայմանագիր և ամբողջությամբ ընդունել 449 օրենսդրական նախաձեռնություն (օրենքների նախագծեր, նախագծերի փաթեթներ), որոնցից 390-ը ՀՀ կառավարության (73-ը կառավարության որոշմամբ՝ անհետաձգելի), 56-ը ԱԺ պատգամավորների (1-ը ԱԺ պատգամավորների որոշմամբ՝ արտահերթ), իսկ 3-ը՝ ՀՀ կառավարության և ԱԺ պատգամավորների համատեղ նախաձեռնություններ էին: Ընդունվել է նաև ԱԺ որոշման 1 նախագիծ: Ընդունված օրենսդրական նախաձեռնություններից 52-ը մայր օրենքներ էին, որոնցից 46-ը կառավարության, 5-ը՝ ԱԺ պատգամավորների և 1-ը համատեղ նախագծեր: Ընդունված օրենսդրական նախաձեռնություններից զատ քննարկվել են նաև պարտադիր և ըստ անհրաժեշտության քննարկվող հարցեր: Մասնավորապես՝ ՀՀ նախագահի պաշտոնի ստանձնման կապակցությամբ որոշվել է անցկացնել հատուկ նիստ, 2 անգամ ընտրվել է ԱԺ նախագահ, 4 անգամ հավանություն է տրվել կառավարության ծրագրերին, 1 անգամ ՀՀ դատախազի միջնորդությամբ հավանություն է տրվել պատգամավորին որպես մեղադրյալ ներգրավելուն, 1 անգամ ՀՀ անկախության 22 ամյակի կապակցությամբ հայտարարվել է համաներում, 2 անգամ նշանակվել է Վերահսկիչ Պալատի նախագահ, 2 անգամ նշանակվել է ՀՀ գլխավոր դատախազ, 1-ական անգամ նշանակվել են Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովի նախագահ և անդամներ, Մարդու Իրավունքների Պաշտպան և Կենտրոնական բանկի նախագահ:

Գումարման ընթացքում մերժվել է 8 ԱԺ որոշման նախագիծ (2-ը ԱԺ պատգամավորների որոշմամբ՝ արտահերթ), 11 օրենսդրական նախաձեռնություններ, որոնցից 5-ը կառավարության (3-ը կառավարության որոշմամբ՝ անհետաձգելի), 6-ը ԱԺ պատգամավորների (4-ը ԱԺ պատգամավորների որոշմամբ՝ արտահերթ), ինչպես նաև 1 ԱԺ հայտարարություն նախագիծ:

Գումարման ընթացքում ԱԺ պատգամավորները ՀՀ կառավարությանը դիմել են 201 գրավոր և 548 բանավոր հարցով, ինչպես նաև 7 հարցապնդում քննարկվել է

ՀՀ ԱԺ նիստերում: Հնչել է 1085 հայտարարություն, որից 330-ը վերաբերվել է կառավարության գործունեությանը:

Հիշարժան են նաև ՀՀ Ազգային Ժողովի ընդունած հայտարարությունները՝ Հայտնի քաղքական, հասարակական գործիչների հանդեպ կատարված բռնությունների կապակցությամբ, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ և 2004 թվականի փետրվարին Բուդապեշտում ՆԱՏՕ-ի դասընթացների ժամանակ հայ սպա Գուրգեն Մարգարյանին սպանած հանցագործին Հունգարիայի իշխանությունների կողմից Ադրբեջանին փոխանցելու և Ադրբեջանի նախագահի կողմից վերջինիս ներում շնորհելու կապակցությամբ:

Ազգային Ժողովի հինգերորդ գումարման ընթացքում ընդունվեցին նաև մի շարք կարևորագույն օրենքներ: Մասնավորապես՝ սոցիալական ոլորտում, «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքը, որով պետական համակարգի աշխատողների աշխատավարձերը միջինում բարձրացան 40%-ով, «Պետական կենսաթոշակների մասին» օրենքը, որը թույլ տվեց կենսթոշակառու-ների կենսաթոշակը բարձրացնել 20-40%-ով, իսկ «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքը հնարավորություն ընձեռեց մարտական գործողությունների ժամանակ մահացած կամ հաշվանդամություն ստացած զինծառայողների ընտանիքներին հատուցման գումարներ վճարել: Հանրային առողջության ոլորտում շատ կարևոր դեր խաղաց «Դեղերի մասին» օրենքը, որը թույլ տվեց դեղերի շուկայում գների էական նվազում արձանագրել, ինչպես նաև բարձրացնել բնակչությանը մատուցվող ծառայությունների որակը: ՀՀ արդարադատության ոլորտում հեղափոխական էր «Պրոբացիայի մասին» օրենքի ընդունումը, որով ամրագրվեցին ՀՀ-ում պրոբացիայի ծառայության ստեղծման և գործունեության իրավական հիմքերը: Ֆինանսական ոլորտում հատկանշական էին նոր Հարկային օրենսգրքի, «Գնումների մասին» օրենքի ընդունումը, ինչպես նաև «Ֆինանսական համահարթեցման մասին» օրենքը, որով ներդրվեց պետական բյուջեից համայնքներին տրվող դոտացիաների բաշխման նոր մեխանիզմ: Բացի նշվածներից ԱԺ ընդունեց նաև գործարար միջավայրի բարելավմանը նպաստող մեկ տասնյակից ավել օրենքներ:

Սակայն, այս ամենով հանդերձ ԱԺ հինգերորդ գումարման ընդունած՝ թերևս ամենակարևոր որոշումը եղել է Հայաստանի Հանրապետության նոր սահմանադրության ընդունումը, որով Հայաստանի Հանրապետությունը կիսանախագահական կառավարման ձևից անցում կատարեց դեպի խորհրդարանական կառավարման ձևի, իսկ այս անցումը ապահովելու համար՝ սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելուց բացի, ընդունվեցին նաև վերջինից բխող չորս սահմանադրական օրենքներ՝ ՀՀ ընտրական օրենսգիրք,

«Ազգային Ժողովի կանոնակարգ», «Կուսակցությունների մասին» և «Մարդու իրավունքների պաշտպանի մասին», օրենքների նախագծերը: